

ՀՏԴ 159.9:06
ԳՄԴ 88
Փ 873

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և
հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ.Մ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Է.Վ. ԱՍՐԻՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
հ.գ.դ. Նադոյան Ռ.Ս.
հ.գ.թ. Պապոյան Վ. Ռ.
հ.գ.թ., Սահակյան Մ.Մ.
հ.գ.թ. Հարությունյան Ն.Ա.
մ.գ.թ. Հովհաննիսյան Ս.Վ.
հ.գ.թ. Հայրապետյան Դ.Ռ.
կ.գ.թ. Ստեփանյան Լ.Ս.

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ
Մնացականյան Բ. Խ.
Պապոյան Ս. Ա.
Կարապետյան Ն. Ի.

Փ 873 Փորձարարական հետազոտությունները հոգեբանության մեջ.
Երիտասարդ հոգեբանների գիտական հոդվածների ժողովածու. Եր.: «Հոգատար
բարեկամ» ԲՀԿ.- 2016.- 186 էջ:

*Սույն ժողովածուն կազմված է հոգեբանական ժամանակակից փորձարարական
տեխնոլոգիաների և հոգեդիագնոստիկ մեթոդիկաների կիրառմանն ուղղված գիտական
հետազոտությունների հիման վրա գրված հոդվածներից:
Այն ներառում է հոգեբանական բնագավառներին առնչվող տեսական և կիրառական
հիմնախնդիրների վերծանում: Ժողովածուի հոդվածների հիմնական դրույթները զեկուցվել են
«Երիտասարդ հոգեբանների միջազգային գիտաժողովում» (2016թ.):
Ժողովածուն նախատեսված է հոգեբանության ոլորտի մասնագետների, ասպիրանտների, ինչպես
ևս ուսանողների համար:*

ՀՏԴ 159.9:06
ԳՄԴ 88

ISBN 978-9939-1-0376-1
© ԵՊՀ, 2016
© «Հոգատար բարեկամ», 2016

ՈԼՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ.....	88
<i>Հակոբյան Հ. Հ., Մարգարյան Վ. Հ., Թերզյան Լ. Տ.</i>	
17. «ԷՔՍՁԻՍՏԵՆՑԻԱՅԻ ՍԱՆԴՂԱԿ» ՀԱՐՑԱՐԱՆԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	91
<i>Պապոյան Ս. Ա., Գանդոմանի Ն.</i>	
18. ՀՈւՋԱԿԱՆ ԻՆՏԵԼԼԵԿՏԸ ՊԱՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԵՆՈւԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈւԹՅՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈւՄ.....	97
<i>Հայրապետյան Դ. Ռ., Պետրոսյան Ն. Կ.</i>	
19. ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԴԵՌԱՀԱՍԻ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.....	102
<i>Մարգարյան Դ. Յ.</i>	
20. ԻՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....	107
<i>Մարգարյան Լ. Կ.</i>	
21. «ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	113
<i>Սեյրանյան Ֆ. Կ., Աղաբեկյան Լ. Ռ.</i>	
22. ՍԹՐԵՍ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ (ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ).....	117
<i>Քամայան Ա. Ա.</i>	
23. ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ КРЕАТИВНОСТИ И МОТИВАЦИИ ДОСТИЖЕНИЯ ПОДРОСТКА В ПРОЦЕССЕ ТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ.....	122
<i>Багдасарян К. А.</i>	
24. ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ АГРЕССИВНОСТИ У ПОДРОСТКОВ РАЗНЫХ НАЦИОНАЛЬНОСТЕЙ.....	127
<i>Высоченко Ю. О.</i>	
25. ПРОФЕССИОНАЛЬНАЯ НАПРАВЛЕННОСТЬ СТУДЕНТОВ НА ЗАВЕРШАЮЩЕМ ЭТАПЕ ОБУЧЕНИЯ В ВУЗЕ.....	132
<i>Гальчун Я. В.</i>	
26. ХАРАКТЕРИСТИКА ЭМОЦИОНАЛЬНОГО И ПОВЕДЕНЧЕСКОГО КОМПОНЕНТОВ НРАВСТВЕННОГО РАЗВИТИЯ В ПОДРОСТКОВОМ ВОЗРАСТЕ.....	138
<i>Губина И. С., Зайцева О. В.</i>	
27. ЛИЧНОСТНАЯ РЕФЛЕКСИЯ КАК ОДНА ИЗ ДЕТЕРМИНАНТ ПЕРЕЖИВАНИЯ ОДИНОЧЕСТВА В ПОДРОСТКОВОМ ВОЗРАСТЕ.....	141
<i>Зайцева О. В., Губина И. С.</i>	
28. ОСОБЕННОСТИ ПСИХОМОТОРНЫХ РЕАКЦИЙ БОРЦОВ-СУРДЛИМПИЙЦЕВ ГРЕКО-РИМСКОГО СТИЛЯ.....	145
<i>Лаптев А. И.</i>	
29. ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ВРЕМЕННОЙ ПЕРСПЕКТИВЫ СТРАШИХ ПОДРОСТКОВ.....	150
<i>Малахова Ю. А.</i>	
30. ИНДИВИДУАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ВЫБОРА ПРОФЕССИИ В ЮНОШЕСКОМ ВОЗРАСТЕ.....	156
<i>Овчаренко Ю. Ю.</i>	
31. ЗНАЧИМЫЕ ИСТОЧНИКИ СТРЕССА РОССИЙСКИХ И ЗАРУБЕЖНЫХ СПОРТСМЕНОВ ВЫСОКОЙ КВАЛИФИКАЦИИ.....	161
<i>Праведникова Ю. Г., Горская Г. Б.</i>	

The article represents the factors of appropriateness of “Existence scale” adaptation as well as the features of steps of the process and the description of the further work planning.

Keywords: existence, fulfillment, adaptation, self-distance, self-transcendence, pilot study.

ՀՈՒՋԱԿԱՆ ԻՆՏԵԼԼԵԿՏԸ ՊԱՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայրապետյան Դ. Ռ., Պետրոսյան Ն. Կ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

Հոդվածը ուղղված է ուսումնասիրելու պարային մասնագիտական գործունեությամբ զբաղվող և ոչ մասնագետ պարողների անձանց հուզական ինտելեկտի դրսևորման առանձնահատկությունները:

Հանգուցային բառեր: պարի հոգեբանություն, հուզական ինտելեկտ, սեփական և ուրիշի հույզերի կառավարում:

Հիմնախնդրի տեսական վերլուծությունը:

Պարողները պնդում են, որ պարը մարդու հոգու արտահայտումն է, հոգու գաղտնի լեզուն (Մ. Գրահամ): Պարը թույլ է տալիս սուրալ ժամանակի և տարածության մեջ, կտրվել ներկայից և միաձուլվել տիեզերական էներգիային:

Ա. Գրիշոնը համարում է, որ պարը սեփական հույզերի հետ հարաբերություններ կառուցելու լավագույն միջոցն է: Այս դարձվածքը ենթադրում է, որ դուք կարող եք փոխել սահմանված դիրքը, հեռավորությունը և վերահսկումը (Гришон, 2013):

Ակնհայտ է, որ հիմնականում բոլոր մասնագետները կապ են տեսնում մարմնի և հոգեկան տարբեր արտահայտումների միջև: Հոգեբանության մեջ այս բանալիում դրվել են հետևյալ հիմնական հարցերը՝ ինչպես են պարողները կողմնորոշվում տարածության մեջ, ինչպես են նրանք ընտրում իրենց քայլերի տեմպը, ինչպես են մարդիկ սովորում դժվար շարունակական շարժումներ՝ ստանալով պարի դիրքեր: Այս հարցերին պատասխանելու նպատակով Տեխասի համալսարանից Մայքլ Մարտինեզի կեղմից անցկացվել է պարային շարժումների առաջին տոմոգրաֆիական հետազոտությունը: Փորձարկվողներ հանդիսանում էին ոչ պրոֆեսիոնալ տանգո պարողներ: Պոզիտրոն-էմիսիոն տոմոգրաֆի (ՊԷՏ) օգնությամբ սկանավորման է ենթարկվել հինգ կանանց և տղամարդկանց ուղեղ: Սկզբում պարողները կատարում էրն արգենտինական տանգոյի դասական «քառակուսին» (շարժումները կատարվում էին տանգոյի գործիքային

երաշտտության ներքո՝ ականջակալների միջոցով): Հաջորդ փուլում պարողները միայն լարում էին ոտքերի մկանները, սակայն շարժումները չէին վերարտադրում: Պարի ժամանակ գրանցված ուղեղային ակտիվությունից հանելով մկանների սովորական լարման ժամանակ գրանցված ակտիվությունը, ֆիքսվում էին ուղեղի այն կենտրոնները, որոնք ուղղորդում են ոտքերը տարածության մեջ և ստեղծում շարժումների կոնկրետ հաջորդականություն: Ստացված տվյալները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել ուղեղային կորդինացիայի մասին, որը պահանջվում է անգամ ամենապարզ պարային շարժումների համար (Костин, 2007): Միաժամանակ մկաններում գտնվող զգայական օրգանները ապահովում են ուղեղի հետ հետադարձ կապ՝ տեղեկացնելով այն մարմնի տարբեր մասերի դիրքի մասին (նյարդային թելերի միջոցով հատուկ ազդակների օգնությամբ, որոնք անցնում են ողնուղղով և հասնում են մինչև մեծ կիսագնդեր): Ենթակեղևային կառույցները՝ ուղեղիկը և խորքային հիմային հանգույցերը օգնում են կարգավորել շարժողական հրամանները, և ապահովում են ճշտություն շարժումների կատարման մեջ: Իսկ արդյոք հնարավորություն են տալիս այս մեխանիզմները ապահովել շարժումների նազանքը, թե՛ ոչ, դեռ պարզ չէ: Պարի ընթացքում տարածության ընկալումը գերակայորեն կինեսթետիկ է, քանի որ պարողը զգում է իր մարմնի և ծայրամասերի դիրքը ցանկացած պահին, անգամ եթե աչքերը փակ են: Վերջինս հնարավոր է դառնում մկաններում զգայական գոյացությունների շնորհիվ, որոնք տեղեկատվություն են հաղորդում ուղեղին ամեն հողի շրժման աստիճանի և մկանների լարվածության մասին, որի հիման վրա ուղեղը հստակ պատկերացում է կազմում մարմնի և իր մասերի դիրքի մասին տարածության մեջ: Հետազոտություններն ապացուցում են այն, որ շարժումների բարդ հաջորդականության ուսուցումը բացի ուղեղի մոտոր համակարգից ակտիվացումից նաև կառավարում է մկանների կծկումը ինչպես նաև շարժման պլանավորման համակարգը, որը տեղեկատվություն է կրում ամեն կոնկրետ շարժման կատարման հմտության մասին. որքան լավ է մարդը յուրացրել որոշ շարժումներ, այնքան ավելի հեշտ է նրան երևակայել իրեն, թե ինչ կզգա նա այդ շարժման կատարման ժամանակ և հավանաբար այնքան ավելի հեշտ է դառնում նրա՝ պրակտիկայում շարժումների յուրացումը: Պարային շարժումների հերթականությունը մտովի վերարտադրելու կարողությունը չի հիմնվում միայն տեսողության վրա, այլ հավասար չափով հանդիսանում է նաև կինեսթետիկ: Շարժման իրական յուրացում պահանջում է սեփական մկանների զգացում՝

շարժողական պատկեր, որը ձևավորվում է ուղեղի՝ պլանավորման համար պատասխանատու շրջաններում (Brown S., Parsons L. 2008):

Հետազոտության մեթոդիկան:

Հիմնվելով առկա ուսումնասիրությունների վրա և կարևորելով պարային գործունեության հոգեբանական կարգավորման հիմնախնդիրը՝ մենք առաջադրեցինք խնդիր ուսումնասիրել պարային մասնագիտական գործունեությամբ զբաղվող անձանց հուզական ինտելեկտը պարային գործունեության տարբեր առանձնահատկությունների համակարգում: Ենթադրվում էր, որ պարողների հուզական ինտելեկտի առանձնահատկությունների դրսևորումը ուղղակիորեն փոխկապակցված է պարային գործունեության տիպերի և դրանց առանձնահատկությունների նախընտրելիության հետ՝ պայմանավորելով պարային գործունեությունում արդյունավետության ցուցանիշները: Ընտրանքը կազմվել է տվյալ պահին տարբեր ոճերում պարային գործունեությամբ զբաղվող 60 ներկայացուցիչներից: Հարցումը կատարվել է մասնագետ և ոչ մասնագետ պարողների շրջանում: Հստակ մեկ ոճի ազդեցության հետևանքներն ուսումնասիրելուց խուսափելու նպատակով հետազոտության մեջ ներգրավել ենք 4 տարբեր ոճերի պարողների, որոնք էին ազգագրական պարի (առանց դասական պարի հիմքի իմացության և պարի մեջ օգտագործման), ազգային պարի (դասական պարի հիմքի վրա կառուցված և ոճային մշակման ենթարկված), լատինոամերիկյան և հիփ-հոփ պարերի պարողներ: Հետազոտության ընթացքում կիրառվել է Խոլլիի հուզական ինտելեկտի մեթոդիկան և մեր կողմից կազմված պարային գործունեության ուսումնասիրման հարցաթերթ:


Հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը:

Արդյունքները ցույց են տալիս, որ հուզական իմացության և տվյալ մասնագիտությամբ շարունակելու որոշումից մտափոխվելը բացասական կորելացիոն կապի մեջ են (Spearman's $p=.044$), ինչը վկայում է այն մասին, որ որքան ավելի բարձր է սեփական հույզերի իմացությունը, այնքան ավելի քիչ են մտափոխվում ժամանակին իրենց արված ընտրության համար: Հաջորդ փաստը կապված է սեփական հույզերի կառավարման հետ: Սեփական հույզերի կառավարումը՝ հուզական ճկունությունը և վերահսկումը, ուղիղ համեմատական կապի մեջ է նախնական սպասելիքների համապատասխանելիության հետ (Spearman's $p=.028$): Հնարավոր է դա կապված լինի վերահսկման և ադապտացման մեխանիզմների հետ, որոնք հնարավորություն են տվել դիտարկել ցանկացած իրավիճակ համապատասխան պայմանների կոնտեքստում և վերասահմանել կամ վերաձևակերպել նախնական սպասելիքները, գուցե հենց այդ

պատճառով էլ սեփական հույզերի կառավարման բարձր կառավարում ունենալու դեպքում բարձր է լինում նաև համապատասխանության մակարդակը: Թե՛ այս պահին պարային համարներում բարձր ներգրավվածություն ունեցող, թե՛ մենապարերի շատ քանակ ունեցող մարդկանց մոտ բարձր է եղել նաև ուրիշի հույզերի կառավարումը (Spearman's $p=.014$): Մեկնաբանությունը կարող է երկակի լինել, քանի որ ինչպես մենապար ունենալու հանգամանքը կարող է ազդել ուրիշի հույզերի կառավարման սանդղակի բարձրացման վրա, այնպես էլ հակառակ կապը կարող է լինել: Երբ խոսում ենք խորեոգրաֆիկ ընդունակությունների մասին, ապա նկատի ենք ունենում «արագ ընկալում, լավ հիշողություն, երևակայություն, հուզական արտահայտվածություն, հույզերի կառավարում», սակայն այս ամենը միայն նախադրյալ է և բավարար չէ խորեոգրաֆիկ տաղանդի միանշանակ առկայության մասին եզրակացություն անելու համար:


Հատկանշական է այն փաստը, որ տղաները միջինում ավելի ուշ են սկսում հաճախել պարի քան աղջիկները: Տղաների պարի գնալու միջին տարիքը կազմել է 12.46, իսկ աղջիկներինը՝ 7.06 (Student's $p=.000$) (Գծ. 1):

Գծապատկեր 1 – Պարը սկսելու սեռադարիքային տարբերությունները



Եթե հետազոտվողներին բաժանենք ըստ մասնագիտությունների և դիտարկենք այդ ասպեկտից, ապա երևում է որ, այն հետազոտվողները, ովքեր չունեին բազային պարային կրթություն, այսինքն ըստ ընտրանքի, նրանք համապատասխանում են ազգագրական պար՝ առանց դասական պարի հիմքի իմացության և պարի մեջ օգտագործման դասին, միջինում ավելի հասուն տարիքում են սկսել զբաղվել պարով: Այս խմբին՝ մասնագիտությամբ չպարողներին, բնորոշ է նաև ուրիշների հույզերի կառավարման բարձր մակարդակը, մինչդեռ դրան զուգահեռ նկատելիորեն ավելի ցածր է սեփական հույզերի կառավարումը (U Mann Whitney $p=.002$) (Գծ. 2):

Գծապատկեր 2 – Հուզական ինտելեկտի առանձնահատկությունները մասնագիտությամբ չպարողների մոտ



Հաշվի առնելով, որ հենց իրենք պարողներն են խոստովանում, որ տրվում են հույզերին, ինքնամոռաց պարում զգալով այն, առանց մտածելու տեխնիկապես ճիշտ կատարման մասին. «...տեխնիկան կգա այն ժամանակ երբ գիտակցես պարի իմաստը, իմաստը հասկանալուց հետո կհայտնվես համապատասխան հուզական վիճակում, որի ժամանակ սխալ կամ ոչ գրագետ շարժումներ չեն կարող լինել...»: Այդ իսկ պատճառով խրախուսվում է «սանձարձակ» հուզական վիճակը և մենք հենց դրա հետ ենք կապում սեփական հույզերի կառավարման ցածր մակարդակը:

Եզրակացություններ

1. Որքան ավելի բարձր է սեփական հույզերի իմացությունը, այնքան ավելի քիչ են պարողները փոշմանում ժամանակին իրենց արված ընտրության համար:
2. Սեփական հույզերի կառավարումը ուղիղ համեմատական է նախնական սպասելիքների համապատասխանելիությունից:
3. Թե՛ այս պահին պարային համարներում բարձր ներգրավվածություն ունեցող, թե՛ մենապարերի շատ քանակ ունեցող մարդկանց մոտ բարձր է ուրիշի հույզերի կառավարումը:
4. Բազային պարային կրթություն չունեցող հետազոտվողների ուրիշների հույզերի կառավարման մակարդակը ավելի բարձր է և դրան զուգահեռ նկատելիորեն ավելի ցածր է սեփական հույզերի կառավարումը:

Գրականության ցանկ

1. **Гиршон А.** Танец с эмоциями. 2015 // <http://girshon.ru/article/tanets-s-emotsiyami-2/>
2. **Костин А.** Исследования USABILITYLAB 2007 // <http://usabilitylab.ru/blog/articles/anatolij-kostin-issledovaniya-v-usabilitylab/>
3. **Brown S., Parsons L.** The neuroscience of dance. Scientific American, 2008 // http://www.neuroarts.org/pdf/SciAm_Dance.pdf

EMOTIONAL INTELLIGENCE IN THE SYSTEM THE PARTICULARITIES OF DANCE ACTIVITIES

Hayrapetyan D.R., Petrosyan N.K. (YSU, Yerevan, RA)

The article is aimed to study the particularities of the manifestation of emotional intelligence of professional and not professional dancers.

Keywords: psychology of dance, emotional intelligence, emotional management of yourself and others.

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԴԵՌԱՀԱՍԻ ԱՆՁԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Սարգսյան Դ. Յու. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

Հոդվածում ներկայացված է տեսողության խնդիրներով դեռահասների անձի հոգեբանական անվտանգության ապահովման գործոնների ուսումնասիրությունը: Ցույց է տրված, թե ինչ հիմնական հոգեբանական պայմաններում կարող է ապահովվել տեսողությունից զուրկ և թույլ տեսող երեխաների հոգեբանական անվտանգությունը, և ինչ առանձնահատկություններ ունի նրանց կենսագործունեությունը:

Հանգուցային բառեր՝ տեսողության խնդրով դեռահաս, հոգեբանական անվտանգություն, հուզական կայունություն, հաղորդակցում:

Անձի հոգեբանական անվտանգությունն ապահովության ինքնազգացողություն է, որը ենթադրում է հոգեբանական կանխատեսվող դժվարություններից պաշտպանվածություն: Դրա ապահովության անհրաժեշտությունը կարևորվում է սահմանափակ կարողություններով դեռահասների համար, ովքեր ունեն արդյունավետ կենսագործունեություն իրականացնելու տարաբնույթ դժվարություններ: Հոգեբանական բարդ խնդիրների առջև են կանգնած տեսողության խնդիրներով դեռահասները, որոնց կենսագործունեության պայմաններն առավել յուրահատուկ են:

Տեսողության խնդիրներով դեռահասի հոգեբանական անվտանգության ապահովման գործոնները դուրս բերելու նպատակով կազմակերպված հետազոտական աշխատանքներն իրականացրել ենք նրանց հարմարման դժվարությունների, շփման և հաղորդակցման, միջանձնային հարաբերությունների և ընդհանուր վարքի դրսևորման առանձնահատկությունների, հուզական կայունության և լարվածության, հուզական